# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17–Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 16 /տասնվեց/ անդամներ, բացակայում էին ավագանու 11 /տասնմեկ/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 16/տասնվեց/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Գայանե Սալնազարյանը, Արմինե Աղրամանյանը, Տիգրան Բաղդասարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը,Աստղիկ Պետրոսյանը, Մանուկ Գևորգյանը, Գոռ Պետրոսյանը, Արտյոմ Չարչյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Հովհաննես Սահակյանը, Լիլիթ Հաջաթյանը, Արտակ Ռափյանը, Մեսրոպ Վարագյանը: Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտակ Հարությունյանը, համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը և Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության,անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը:Քննարկումից հետո նիստի հետևյալ օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականություն փոխանցելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող KIA SORENTO 3.8 մակնիշի 062 CP 61 պետհամարանիշերով ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Աբովյան փողոց 8 հասցեի հողամասի սահմանների մեջ ընդգրկված էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ-ենթակառուցվածքների նպատակային նշանակությամբ 0,04249հա մակերեսով հողամասի բնակավայրերի նպատակային նշանակությամբ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից աճուրդային եղանակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք գյուղ Փոքր Մանթաշ 6-րդ փողոց 3-րդ փակուղի 4/43 hասցեում գտնվող 0,07902hա մակերեսով 08-115-0038-0094 կադաստրային ծածկագրով հողատարածքը օտարելու և օտարման մեկնարկային գին սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 1,0hա մակերեսով 08-002-0244-0080 կադաստրային ծածկագրով արոտավայրը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 0,07986hա մակերեսով արոտավայրը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 0,63461hա արոտավայրը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից ուղղակի վաճառքով Գալուստ Ջավենի Սարոյանին ընդլայնման նպատակով հողատարածք օտարելու և օտարման գին սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 9-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նիստի օր նշանակելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Օրակարգը հաստատվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը:Նա ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն

հավելվածի:Նա մանրամասն ներկայացրեց 2022 թվականի բյուջեի մուտքերն ու ծախսերը, նշելով որ տարբեր մասերով կան թե գերակատարումներ, թե թերակատարումներ, որոնց վերաբերյալ հարցին Է.Յայլոյանը պատասխանեց, որ դրանք պայմանավորված են մոտավոր պլանավորմամբ: Մ.Վարագյանի հարցադրումներին Է.Յայլոյանին կողմից պարզաբանումներ տալուց հետո, հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 2-րդ հարցը նույնպես ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը:Նա ներկայացրեց որոշման նախագիծ Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին՝ համաձայն հավելվածի:Նա նշեց որ հրավիրվել է համապատասխան լիցենզավորված կազմակերպություն, որը գյուղ առ գյուղ կատարել է այցեր, ուսումնասիրություններ, որից հետո կատարել է գույքագրում:Գույքացուցակները ուղարկվել են համյնքի վարչական ղեկավարներին հաստատելու համար:Ինչպես նաև կատարվել է բոլոր

գույքերի վերագնահատում:Հարցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ չեղան, որից հետո այն դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Աստղիկ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Գոռ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Ռափյան Արտակ

Վարագյան Մեսրոպ

Ա.Տոնոյանի կողմից բարձրացվեց հարց, որը մանրամասնեց համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը:Նա նշեց, որ նիստին ներկա է <<Շտիգեն>> կազմակերպության ներկայացուցիչը:Նա նշեց, որ Արթիկ համայնքի արտերկում բնակվող քաղաքացիների կողմից տրամադրվել է դրամական միջոցներ և <<Շտիգեն>> կազմակերպության կողմից Արթիկ համայնքի զոհված զինծառայողների ընտանիքներից շատերի տներում տեղադրվել էլ արևային էլեկտրոկայաններ: Կազակերպությանը Արթիկ համայքնի կողմից տրամադրվեց շնորհակալագիր:Համայնքի ղեկավարը իր և ամբողջ համայնքի անունից շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական հարցերով գլխավոր մասնագետ սոցիալական աշխատող Հերմինե Սահակյանը:Նա նշեց, որ համայնքապետարանին ներկայացվել են դիմումներ՝ սոցիալապես անապահով ընտանիքների կողմից, որոնք ուսումնասիրվել են անհատապես, յուրաքանչյուր դիմումի կարիքների գնահատումը կատարվել է կառավարության հաստատած բալային

համակարգի միջոցով, ըստ որի հաստատվել են 23 դիմումներ և մերժվել է 2 դիմում:Ընդհանուր առմամբ առաջարկվում է հատկացնել 840.000 ՀՀ դրամ:Հարցի վերաբերյալ հարցադրումներ արեց Լ.Հաջաթյանը,որոնք պարզաբանեց Հ.Սահակյանը: Վ.Մակեյանը նշեց նաև, որ գումար է տրամադրվել գյումրեցի գրող Գ.Վարդանյանին՝ զոհված զինծառայողների մասին գրքի հրատարակման համար:Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Զարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերը սեփականության իրավունքով պետական սեփականությանը փոխանցելու մասին:Նա նշեց, որ դրանք Արթիկ քաղաքի և 12 գյուղերի արխիվային գործերն են:Նա նշեց, որ Արթիկ քաղաքի արխիվային փաստաթղթերը 2009 թվականից դեռ պահպանվում են Արթիկի համայնքապետարանում: Հարցը քննարկելուց հետո դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Աստղիկ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Գոռ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Ռափյան Արտակ

Վարագյան Մեսրոպ

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթև Աղաքարյանը:Նա ներկայացրեց որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համանքի սեփականություն հանդիսացող KIA SORENTO 3.8 մակնիշի 062 CP 61 պետհամարանիշերով ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:Նա նշեց, որ մեքենան 3 անգամ հանվել է աճուրդային եղանակով վաճառքի, սակայն չի վաճառվել: Իսկ նշված ՀՈԱԿ-ի աշխատանքներն ավելի պատշաճ կազմակերպելու համար ավելի նպատակահարմար է մեքենան տրամադրել «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:Ինչպես նաև առաջարկվեց ավտոմեքենան հաշվառել «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում: Ավագանու անդամ Լ.Հաջաթյանի կողմից բարձրացված հարցերի պատասխանեց համակնքի ղեկավար Ա.Ոսկանյանը, պարզաբանելով, որ մեքենան

ՀՈԱԿ-ին տրամադրելու դեպքում, դա ՀՈԱԿ-ին մեծ աջակցություն կլինի:Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սաղնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: Նա ներկայացրոեց որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Աբովյան փողոց 8 հասցեի հողամասի սահմանների մեջ ընդգրկված էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ-ենթակառուցվածքների նպատակային նշանակությամբ 0,04249 հա մակերեսով հողամասի բնակավայրերի նպատակային նշանակությամբ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:Սույն որոշման նախագծով Ա.Գրիգորյանը առաջարկեց փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Արթիկ քաղաքի Աբովյան փողոց 8/1 հասցեի 2006թվականի մարտի 10-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման /N 23072020-08-0038/ վկայականով հողամասի սահմանների մեջ ընդգրկված Արտակ Համլետի Հարությունյանին պատկանող էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ-ենթակառուցվածքների նպատակային նշանակությամբ 0,04249հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխել

էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ-ենթակառուցվածքների նպատակային նշանակությունից՝ բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակության կոմունալ ենթակառուցվածքներից փոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:Ավագանու անդամների կողմից չեղան հարցեր:Հարցը ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 7-րդ հարցը նույնպես ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: Այն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից աճուրդային եղանակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնք գյուղ Փոքր Մանթաշ 6-րդ փողոց 3-րդ փակուղի 4/43 հասցեում գտնվող 0,07902հա մակերեսով 08-115-0038-0094 կադաստրային ծածկագրով հողատարածքը օտարելու եվ օտարման մեկնարկային գին սահմանելու մասին: Առաջարկվեց օտարման մեկնարկային գին սահմանել 1քմ-ի համար՝ 514,8 (հինգ հարյուր տասնչորս դրամ ութ լումա) ՀՀ դրամ: Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| Կողմ (16) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 8-րդ հարցը ևս ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: Նա առաջարկեց տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 1,0հա մակերեսով արոտավայրը /կադաստրային ծածկագիր 08-002-0244-0080/ մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով վարձակալությամբ տրամադրելու առաջարկությանը:Առաջարկվեց վարձակալության վճարի մեկնարկային վարձավճարի գին սահմանել՝ 1հա-ի համար 2750 (երկու հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով: Մ. Վարագյանը հարց բարձրացրեց մեկնարկային գնի վերաբերյալ, որը պարզաբանվեց համայնքի ղեկավարի կողմից: Հարցի վերաբերյալ այլ հարցեր և առաջարկություններ չեղան, որից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Աստղիկ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Գոռ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Ռափյան Արտակ

Վարագյան Մեսրոպ

Օրակարգի 9-ից 11-րդ ընթացիկ հարցերը ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: 9-րդ և 10-րդ հարցերը վերաբերվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից 0,07986հա և 0,63461հա մակերեսով արոտավայրերը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասերի վարձավճարի մեկնարկային գին սահմանելուն:Առաջարկվեց կառավարության սահմանված կարգով մեկնարկային վարձավճարի գին սահմանել՝ 1հա-ի համար 2750(երկու հազար յոթ հարյուր հիսուն)ՀՀ դրամ: Իսկ 11-րդ հարցը ներկայացնում է որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Արթիկ քաղաքի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից Պարույր Սևակի փողոց 62 հասցեում գտնվող Գալուստ Զավենի Սարոյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի գործառնական նշանակության հողամասին (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով N 2495761, տրված 2010 թվականի հոկտեմբերի

11-ին) կից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Պարույր Սևակի փողոց 72 հասցեում գտնվող 0,02223հա մակերեսով հողամասը՝ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16022023-08-0026, տրված 2023թվականի փետրվարի 16-ին) Գալուստ Ջավենի Սարոյանին որպես ընդլայնում ուղղակի վաճառքով օտարելուն: Առաջարկվեց հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 2887,5 (երկու հազար ութ հարյուր ութսունյոթ դրամ հինգ)ՀՀ դրամ: Քննարկումից հետո հարցերը դրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Օրակարգի 12-րդ ընթացիկ հարցը ներկայացրեց համայնքապետարանի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթև Աղաքարյանը:Նա ներկայացրեց որոշման նախագիծ, որով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 20-ի «Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող Կամազ մակնիշի 599 cc 61 պետհամարանիշերով և HYUNDAI HD 65 մակնիշի, 172 LS 47 պետհամարանիշերով ավտոմեքենաները անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի քաղաքային տնտեսության

սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» թիվ 9-Ա որոշման վերնագրում 172 LS 47 պետհամարանիշերի փոխարեն գրել 065 CP 61 թվերը և տառերը: Հարցի վերաբերյալ այլ հարցեր և առաջարկություններ չեղան, որից հետո այնդրվեց քվեարկության և ընդունվեց կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Ռափյան Արտակ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |

Համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը ներկայացրեց,որ Արթիկ համայնքի հետ <<քույր քաղաքների դաշնագրով>> կապված Ֆրանսիայի Հանրապետության Վո-ան-Վլեն քաղաքի կողմից Արթիկ համայնքին նվիրատվության կարգով հանձնված <<Renault midlum>> մակնիշի աղբատար ավտոմեքենան 2023թվականի փետրվարի 17-ին բերվել է Հայաստանի Հանրապետություն: Նա նշեց, որ հնարավոր է, որ կարիք լինի մեքենայի բոլոր ձևակերպումները պատշաճ կարգավորելու համար կարիք լինի վճարել 4000եվրոյին համարժեք ՀՀ դրամ, սակայն արվում է հնարավոր ամեն ինչ առանց այդ վճարի մուծման մեքենան ձևակերպել: Նա առաջարկեց ընդունել ի գիտություն, կարիքն առաջանալու դեպքում տվյալ գումարը փոխանցելու համար: Ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

Օրակարգի 13-րդ հարցը ներկայացնելով Ա.Ոսկանյանը հայտարարեց ավագանու նիստն ավարտվելու մասին, և առաջարկվեց ավագանու հաջորդ հերթական նիստը գումարել 2023 թվականի մարտի 15-ին ժամը 15.00-ին:Քվեարկություն՝ կողմ՝ 16, դեմ՝ 0,ձեռնպահ՝ 0:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Աստղիկ

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Գոռ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Ռափյան Արտակ

Վարագյան Մեսրոպ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնք
17 փետրվար 2023 թվական